

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՋՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

11 փետրվարի 2011 թ.

N 50-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԿՍՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերին համապատասխան՝

Հրամայում եմ՝

Հաստատել հաստատագրված վճարով հարկվող գործունեության վերսկսման կամ դադարեցման մասին դիմումի ձևը և լրացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Կոմիտեի նախագահ

Գ. Խաչատրյան

Հավելված
ՀՀ կառավարությանն առընթեր
պետական եկամուտների
կոմիտեի նախագահի
2011 թ. փետրվարի 11-ի
N 50-Ն հրամանի

ՁԼ

լրացվում է հարկային տեսչության անվանումը

Փաստաթղթի համարը՝ _____

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

Դ Ի Մ ՈՒ Մ

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՈՎ ՀԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԿՍՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Հաստատագրված վճար վճարողի անվանումը _____

2. Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) _____

3. Տեղեկացնում եմ, որ գործունեության իրականացման հետևյալ վայրում (հասցեում) վերսկսում եմ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը՝

N	Գործունեության իրականացման վայրը (հասցեն)	Գործունեության տեսակը	Օբյեկտի նույնականացման համարը՝ լրացվում է հարկային տեսչության կողմից
1	2	3	4

Կից ներկայացնում եմ հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին նոր հայտարարություն (հայտարարություններ):

Առդիր _____ թերթ:

4. Տեղեկացնում եմ, որ գործունեության իրականացման հետևյալ վայրում (հասցեում) դադարեցնում

Եմ հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը.				
N	Գործունեության իրականացման վայրը (հասցեն)	Գործունեության տեսակը	Գործունեության դադարեցման սկիզբը (ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)	Օբյեկտի նույնականացման համարը՝ լրացվում է հարկային տեսչության կողմից
1	2	3	4	5

Կազմակերպության տնօրեն (անհատ ձեռնարկատեր) _____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Հաշվապահ _____ ստորագրությունը, անունը, ազգանունը

Դիմումի ստացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը 20 թ. _____

(լրացվում է հարկային տեսչության կողմից)

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԿԱՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Դիմումը լրացվում և ներկայացվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերին համապատասխան: Դիմումը ներկայացվում է նախապես՝ գրավոր մինչև հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը դադարեցնելը կամ վերսկսելը:

2. Դիմումը լրացվում է երկու օրինակից և ներկայացվում հարկ վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչություն: Հարկային տեսչության կողմից դիմումը հաշվառելուց (գրանցելուց) հետո մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին:

3. Դիմումի ձևի 1-ին կետում լրացվում է հաստատագրված վճար վճարողի անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը:

4. Դիմումի ձևի 2-րդ կետում լրացվում է հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ-ն):

5. Դիմումի ձևի 3-րդ կետի աղյուսակի՝

1) 2-րդ սյունակում լրացվում է գործունեության իրականացման վայրը (հասցեն), որտեղ վերսկսվում է հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, իսկ 3-րդ սյունակում՝ հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակը: Ավտոտրանսպորտային գործունեության վերսկսման դեպքում դիմումի ձևի 3-րդ կետի աղյուսակի 2-րդ (գործունեության իրականացման վայրը (հասցեն)) սյունակում լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, պետհամարանիշը, իսկ 3-րդ (գործունեության տեսակը) սյունակում՝ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված իրականացվող ավտոտրանսպորտային գործունեության տեսակը՝ թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրում կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն կամ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն:

2) 4-րդ սյունակը (օբյեկտի նույնականացման համարը) լրացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչության կողմից:

6. Մեկից ավելի գործունեության իրականացման վայրում (հասցեում) գործունեությունը վերսկսելու դեպքում գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար աղյուսակում տվյալները լրացվում են առանձին տողերով:

7. Գործունեության վերսկսման դեպքում դիմումին կից ներկայացվում է հաստատագրված վճարի հաշվարկման համար ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին նոր հայտարարությունը (հայտարարությունները)՝ լրացնելով առդիր թերթերի քանակը:

8. Դիմումի ձևի 4-րդ կետի աղյուսակում լրացվում է գործունեության իրականացման վայրը (հասցեն), որտեղ դադարեցվում է հաստատագրված վճարով հարկվող գործունեությունը, դադարեցվող գործունեության տեսակը և գործունեության դադարեցման սկիզբը՝ ամսաթիվը, ամիսը, տարեթիվը: Ընդ որում, գործունեության դադարեցման սկիզբը չի կարող դիմումի ներկայացման օրվանից ավելի շուտ լինել: Ավտոտրանսպորտային գործունեության դադարեցման դեպքում դիմումի ձևի 4-րդ կետի աղյուսակի 2-րդ (գործունեության իրականացման վայրը (հասցեն)) սյունակում լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի մակնիշը, պետհամարանիշը, իսկ 3-րդ (գործունեության տեսակը) սյունակում՝ ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված իրականացվող ավտոտրանսպորտային գործունեության տեսակը՝ թեթև մարդատար

ավտոմեքենաներով ուղևորափոխադրում կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) գործունեություն կամ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն:

9. Դիմումի ձևի 4-րդ կետի աղյուսակի 5-րդ սյունակը (օբյեկտի նույնականացման համարը) լրացվում է հաստատագրված վճար վճարողի հաշվառման վայրի հարկային տեսչության կողմից:

10. Սեկից ավելի գործունեության իրականացման վայրում (հասցեում) գործունեությունը դադարեցնելու դեպքում գործունեության իրականացման յուրաքանչյուր վայրի (հասցեի) համար աղյուսակում տվյալները լրացվում են առանձին տողերով: